


ԴԻԼԻՆ

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ
ՀԱԳՈՐԾԱԿ



ԴԵՏՐԱՆ
1939

25 SEP 2006
9 NOV 2010

Պրոլետարիատ բուլը յերկրորդ, մասնակի

391.71
հ-36

Գ. Ի Լ Յ Ի Ն

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ Լ Ա Գ Ո Դ Ա Ն

(ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ)



Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1939

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ա Ն

1

Պովոլժյեյի մի ձյունապատ գյուղ մթնչաղով
եր պատած։ Զյան բլուրներից ձեռնասահնակնե-
րով ճարպկորեն սահում եյին յերեխաները։ Ի-
սակլինսկի մեքենատրակտորային կայանի ադա-
րակում կանայք սեղան եյին պատրաստում և ճա-
շի սպասում իրենց ամուսիններին։ Արհեստանոց-
ներում փոխվում եյին հերթերը։ Ծերունի փա-
կանագործ Լագողան մոտենում եր մի գեղեցիկ
ու սպիտակ տնակի։ Նա այսոր բարձր տրամա-
դրություն ուներ։ Ֆեղոր Աբրոսիմովիչը յերե-
վակայում եր, թե վո՞րքան կուրախանա իր ավագ
վորդի Սեմյոնը— հեռավորարեկելյան զորամասե-
րից մեկի սնայպեր, յերբ հեռագիր ստանա, թե
աղջիկ ե ծնվել։

— Դե, զնամ դեղատուն ծծակ զնելու, նվեր
բերեմ թոռնիկուհու, — վճռեց ծերունին:

Հասնելով առաջին նրբափողոցին, Լագողան շըձվեց դեպի աջ: Նա կարողացավ նկատել, վոր ձին քեկլով սլանում եր մի ձիավոր: Ի՞նչ մի առանձին դիտելու բան է այդ ձիավորը— մի՞թե այդպիսիներին քիչ է տեսել իր կյանքում Ֆեկոր



6572-50

Д. ИЛЬИН
Пограничник Лагода
Гиз Арм. ССР, Ереван, 1939

Սբրոսիմովիչը։ Ծերունու սիրտը չեր վկայում,
թե վորպիսի՛ սարսափելի տեղեկություն եր բե-
րում իր տունն այդ սուրհանդակը։

II

Հեռավոր-արևելյան սահմանների վրա թան-
ձըր մառախուզ եր իջել։ Սպիրտի ջերմաչափը
ցերեկ ժամանակ ցույց եր տալիս քառասուն հինգ
աստիճան սառնամանիք։ Ն....ամրացված ռայոնն
ապրում եր իր սովորական համաչափ կյանքով։
Մարտիկները դետքի եյին գնում։ Ուղեցույցները
հակազագերով քայլելու արվեստն եյին սովորեց-
նում խուզարկու չներին—սակավապահնջ վոչխա-
րապահներին և նրբակազմ դորեման—ոլինչերնե-
րին՝ թաթերին կաշվե մաշիկներ հագած և մեջքին
յերկար ժապավեններով, վոր փողկապի պես հան-
գույց եյին արված։ Տեղի եյին ունինում շարային
պարապմունքներ։ Ինչ-վոր մի տեղ ամպերի վրա
շառաչում եյին «բազեյիկների» եսկադրիլներ-
այսպես փաղաքանքով եյին անփանում Հեռավոր
Արևելքում կարճ, կարծես թե շուրջանակի կտըր-
ված իրան—Փյուզելյաժ և հզոր մոտոր ունեցող ա-
րագընթաց կործանիչներին։ Տրանսիլյացիայի
ցանցերի ընդունիչ և հաղորդիչ ապարատների մոտ
աշխատում եյին ռադիոստներ։ Հրամանատարների
կանայք ձաշարանն եյին զարդարում։

Իրենց վրա քաշելով քողարկող սպիտակ բալա-
խոնը, դագանների արահետի մոտ դարսն մտան
յերկու կարմիր-բանակային՝ մեկն ուկրաինացի,
մյուսը՝ պովոլժաբնակ։ Շուտով նրանք դաշտա-
յին հեռախոսով կանչեցին շտարի հերթապահին.
Ժամի 13-ից 5 րոպե անց այն կողմից վագելով

սահմանն անցավ վարազների մի վոհմակ՝ թվով
մինչեւ տասը։ 18 րոպե անց շտաբը մի զեկուցա-
գիր ևս ստացավ—յերկու դայլ սահմանը խախ-
տեցին։ Նրանք վազեցին Մանջուրիայի կողմից և
դեպի տայգայի խորքերը ուղցան։ Վազելով ան-
ցան նաև նապաստակներ։

— Այդ ինչից ե, վոր այդպես սկսեցին դես
ու դեն վազվգել դազանները — բարձրաձայն
մտածեց շտաբի պետը։ Հավանաբար, այդ ան-
տառներում յերկոտանի գիշատիչներ են սկսել
շարժվել։

Յերեկ չե մյուս որը այստեղ եյին անկոչ
հյուրերը։ Ոտար տերիտորիային սիրահար ճա-
պանացիները հարձակվեցին խորհրդացին սահմա-
նապահների վրա, վոտք գրին մեր հողի վրա։ Այդ
բանը շատ թանգ նստեց սամուրայներին։ Ճիշտ
է, ժամանակի սղության պատճառով նրանք չեղ-
քեցին իրենց փորը, ինչպես այդ հրամայում ե ճա-
պանական «գինվորական վողին»։ Ամեն ինչ զգալի
չափով ավելի պարզ եր զարձել։ Ժամանակակից
սամուրայները — սակավահարդո գեներալ Արա-
կիի հետեւրդները — պարզապես քցում եյին հրա-
յանները, հանում շինելները, կորցնում սապոդ-
ները և ամբողջ թափով գեպի իրենց տներն եյին
փախչում։ Ել ո՞ւր մնաց վոր մտածեցին առնական
«զինվորական վողու» մասին։

Միավորության հրամանատարը կարդում եր
հենց նույն ամփոփագիրը. ժամի 13-ից 5 րոպե
անց սահմանամերձ կողմից զեպի մեր տերիտո-
րիան վազեցին վարազներ։ Ժամի 13-ից 23 րոպե
անց հենց նույն կողմից վազեցին դայլեր... Գըն-
դապետն ուշադրությունը լարեց՝ այս ուրիշ բան

չե, յեթե վոչ տայդայում թափառում են հին ծա-
նոթները:

Մի անգամ և հարց ու փորձ արին ժամա-
պահներին: Ամեն ինչ խաղաղ եր... Գաղաններն
ել այլևս չեն վազվզում: Մառախուղն ավելի յե-
խտացել: Զերմաշափի մեջ սպիրտի բարակ սյու-
նիկն ավելի իջավ: Իջնում ե գիշերը: Վոչ մի
ձայն: Սառնամանիքը կարծես ամեն ինչ կաշկան-
դել ե: Ո՞վ գիտե, խարուսիկ չե՞ արդյոք այդ լը-
ռությունը...



Հենց նույն ժամին Մոսկվայում վառվում ե-
րին առաջին լույսերը: Զյուն եր տեղում: Կար-
միր հրապարակով դեպի Կրեմլ, դեպի Մեծ պա-
լատ երին շտապում ժողովրդի ներկայացուցիչ-
ներ՝ Պրիդնեպրովիայի տունդրաներից և տափաս-
տաններից, Զբրուչի ափերից և Թուրքմենիայի
ավագուտներից, Տաջիկստանի լեռնային հովիտ-
ների և Սիրիրի անտառների բնակիչներ, Ուրալի
մետաղագործներ և Կազախստանի անասնապահ-
ներ, Կովկասի լեռնականներ և Դոնքասսի հանքա-
փորներ, կազակ կոլտնտեսականներ, Ուստուրի-
այի տայգայի ստանիցաներից և ջրառատ Դոնի
ափերից, Բալթիկի նավաստիներ և Պրիմորիայի
տանկիստներ: 1936 թվի նոյեմբերի 25-ի որն եր:
Յերեկոյան ժամի 5-ին Խորհուրդների Արտակարդ
VIII համագումարի ամբիոն բարձրացավ Ստա-
լինը: Ամբողջ աշխարհի ռադիոընդունիչները յե-
թերի մեջ բռնում երին զեկուցման յուրաքանչյուր
խոսքը՝ ազատության մեծ հրովարտակի (խար-

տիայի) մասին, սոցիալիզմի յերկրի նոր Սահմա-
նադրության մասին:



Կարմիր-բանակային Սեմյոն Լազողյան հենց
նոր եր վերադարձել վերակարգից: Նա արագու-
թյամբ անցավ լենինյան անկյունը, վերցրեց լսա-
փողերը և, հարմար կերպով նստելով բազկաթո-
ռում, սկսեց ազահարար լսել: Ահա վորոտաց ամ-
պը: Վոչ, դա ավելի շուտ ծովային ալերախու-
թյան եր նման— համագումարը ծափահարում եր
հարազատ Ստալինի խոսքերին. «Մեր խորհրդային
հասարակությունը հասավ այն բանին, վոր նա
արդեն հիմնականում իրականացրել ե սոցիալիզ-
մը, ստեղծել ե սոցիալիստական հասարակակարգ,
այսինքն՝ իրականացրել ե այն, ինչ վոր մարք-
սիստների մոտ այլ կերպ կոչվում ե կոմունիզմի
առաջին կամ ստորին փուլ...»:

Սակայն լագողան բախտ չունեցավ յերկար
լսելու Մոսկվայի ռադիոհաղորդումը...

Բանդիտները, հա, այսինքն՝ կվանտունյան
բանակի սամուրայները, զինվորներին գիշերային
հարձակման քշեցին խորհրդային սահմանի վրա:
Ն... ամրացրած ռայոնում հնչեց մարտատագ-
նապ: Սնայպեր Սեմյոն Լազողյան մի ակնթար-
թում գնդացիրը դրեց հոպնակի վրա և ոլացավ
զեպի սահմանի վրա գտնվող վայրի սոպկաները: Այնտեղ եր ամրանում թշնամին: Զառիվերը
շատ սեպ և կտրուկ եր: Հոպնակով առաջ շարժ-
վելն անհնարին եր: Սեմյոնը հոպնակից իջեցրեց
գնդացիրը, դրեց մեջքին և սովաց զեպի վեր:
Յերկուհարյուր մետրից հետո կտրիճը կանգ ա-

ուավ: Մի քանի ակնթարթ —և ահա տկալացրեց «մաքսիմը»: Լազողայի արագաշարժ ձեռքերում գնդացիրը հրացքներ եր գործում: Չախկալի նման վախկոտ ճաղոնամանջուրական կովողներն ամբողջ դասակով եյին գրոհում հերոսի վրա: Իրենց ամբողջ կրակը նրա վրա կենտրոնացրին հարձակիչների գնդացիրները: Սեմյոնին պաշտպանող զերանները տաշեղների վերածվեցին: Վեց գնդակ ծակեցին վահանակը, յերեքը կպսն գլանիչին, յերկուաը ծակոտեցին կաշեպատյանը: Բայց Լազողան իր պոստում մնաց այնքան ժամանակ, մինչև վոր թշնամու գնդակը նրան խլեց շարքերից:

Սեղմելով վերքն այն ձեռքով, վորից վտակի նման արյուն եր հոսում, Սեմյոն Լազողան շարունակում եր հնձել սամուրայներին իր «մաքսիմի» չեշտակի կրակով: Ձեռքը մի փոքր դողում եր, բայց սնայպերի աչքը հավատարիմ եր: Յեկավ հերթափոխը: Ընկերները նրան առաջարկեցին իրենց ոգնությունը, ուզում եյին նրան դուրս բերել կրակի տակից: Լազողան հրաժարվեց և միայն խնդրեց, վոր վորեւ մեկը գրավի իր տեղը գնդացըրի մոտ, իսկ ինքը մի քեզ մի կողմի վրա սողաց:

Սամուրայները նեղում եյին: Նրանք, առնը վազն, հինգ անդամ ամելի շատ եյին, քան խորհըրդային յերկրի անվեհեր պաշտպանները: Ատամները սեղմելով, գերմարդկային ճիգեր թափելով, Սեմյոնը վայրկենաբար բարձրացավ, նըռնակը նետեց ճաղոնացիների մեջ և ուշաթափ գլորվեց գետին: Անցավ մի քանի րոպե: Սեմյոնն ուշքը յեկավ: Առանց վորեւ տնքոցի սկսեց սողալ դեպի հետ, դեպի թիկունքը: Նրա ականջին հա-

սան հարյուրավոր կոկորդներից դուրս պոկած «ու ռայի» ձայներ:

— Մերոնք հարձակման գնացին, — առանց սխալվելու մտածեց Սեմյոնը:

Յերիտասարդ և ուժեղ որդանիզմը շատ որեր պայքարեց մահվան զեմ: Տայգայի վրայից սավառնակներով հերոսին այցելության եյին շտապում Խաբարովսկի և Վլադիկոստոկի ամենահըմուտ սլորֆեսորները: Վիրաբուժները կրկին և կրկին անգամ եյին միջամտում, փորձելով փոխել հիվանդության ընթացքը, կտրել, կանգնեցնել քայլքայիչ պրոցեսը: Զորս անգամ արյան սրսկում կատարեցին: Սեմյոնը յերբեմն գիտակցության եր գալիս: Հարց ու վիրճ եր անում կովի վախճանի մասին, պահանջում եր պատմել բոլոր մանրամասնությունները, ուրախանում եր սամուրայների ջախջախման համար: Խնդրում եր չանհանգըտանալ իր մասին: Շարունակ հարցնում եր, թե կնոջից նամակ չի՞ ստացվել արդյոք, նապետք ե վոր յերեխա ծնի:

Մոսկվայից մի քանի անգամ հարցրին, թե ինչպես ե Լազողայի առողջությունը, չե՞նք կարող արդյոք վորեւ բանով ոգնել:

Նրա անկողնու մոտ անբաժան հերթապահություն եյին անում հրամանատարների կանայք: Հեռավորարևելյան կարմրադրոց Հատուկ բանակը, Խաղաղովկիանոսյան նավատորմը, Ամուրի կարմրադրոց նավատորմիկը, Խաբարովսկի բանվորները, յերիտասարդության կոմսոմոլսկ քաղաքի կառուցղները, Սուչանի հանքագործները, Վլադիկոստոկի տնտեսուհիները Բիրոբիջանի հրեա կոլտնտեսականները իրենց պատրամավորություններն եյին ուղարկում վիրավոր հերոսին այ-

ցելելու և նրա ձեռքը սեղմելու համար։ Թուչելով
հիվանդանոցի վրայով՝ ողաջուները հաղորդում
եյին իրենց ցանկությունները և պահանջում եյին
ուղղիոյով հաղորդել, թե նա ինչպե՞ս ե զգում ի-
րեն։ Հրամանատարներն ու կոմիսարները տասնյակ
ռապորտներ եյին ստանում։ Բոլորովին անծանոթ
մարդիկ, վորոնք յերբեք չեյին տեսել Սեմյոնին,
իրենց ոգնությունն եյին առաջարկում։

— Ընկեր Լագողան շատ արյուն ե կորցրել,
յես նրան ուրախությամբ կտամ իմ արյունը,
ինչքան հարկավոր ե...

Դեկտեմբերի կեսերին Մոսկվայից ստացվեց
կառավարական հազորդագրությունն այն մասին,
վոր մարտական կարմիր Դրոշի շքոնշանով պար-
զեվատրվում ե Հայրենիքի անձնվիր և քաջարի
Հայրենասեր Սեմյոն Լագողան։ Սեմյոնը պառկած
եր ուշաթափ, վոչ վոքի չեր ճանաչում։

Անցավ մի որ ևս։ Պրոֆեսորը տիրապին ա-
սաց։

— Բժշկական գիտությունից վերցրինք այն
ամենը, ինչով նա այժմ հարուստ ե։ Բայց մահը
հաղթեց...

Հեռավոր Արևելքը սուր հարավ։ Յերկրամա-
սը թաղեց իր Լագողային։ Դադաղը դրված եր
Սպասուկում՝ կարմիր Բանակի տանը։

Հերոսին հրամեշտ տալու համար տասնյակ
հազարավոր մարդիկ յեկան։ Սեմյոնի աճյունը
Հողին Հանձնեցին քաղաքի կենտրոնական հրապա-
ռակում։ Նրա կողքին Սպասուկի լեզենդար պար-
աիզանների յեղբայրական գերեզմանը լույսայն
հիշեցնում եր «Սպասուկի գրահային գիշերները»,
բառանից կոփված սամուրայական բաստիոնների



Խոհան Լագողան իր զոհված յեղբայր Սեմյոնի աղջկա՝ ետք՝ Հեռավոր-
արևելյան կարմրադրու Հատուկ Բանակի շարքերը մեկնելու օրը։

անկումը, ճապոնացիների ջախջախումը 1922 թ-ը՝
Հականին:

III

Ֆեղոր Արբոսիմովիչն ուժեղ թափով բաց ա-
րեց իր բնակարանի դռուը: Հենց վոր դռան չեմքն
անցավ, տեղն ու տեղը սառած մնաց: Լաց եր լի-
նում Սեմյոնի պառավ մայրը, վշտից մորմոքվում
եր կինը: Վորդի իվանը հորը ներկայացրեց Հե-
ռավոր-արևելյան Կարմրադրոշ Հատուկ Բանակի
շտարից ստացված հեռագիրը.

«Նոյեմբերի 26-ին, խորհրդային հողը ներ-
կուժած ճապոնա-մանջուրական ավանտյուրիստ-
ների հետ տեղի ունեցած կովում ծանր վիրավոր-
վեց ձեր վորդին՝ Սեմյոն Ֆեղորովիչը: Դեկտեմ-
բերի 19-ին նա վախճանվեց: Պատերազմի հրձիդ-
ները մի զոհ ևս խլեցին յերջանիկ կյանքի ակտիվ
կառուցողների շարքերից: Զոհվեց սքանչելի մար-
տիկ գնդացրողը, բոլոր կարմիր-բանակայիննե-
րի սիրելին: Պաշտպանելով սոցիալիստական հայ-
րենիքը լկտի հարձակիչներից, նա կովի ժամա-
նակ վարվեց վորպես իսկական հերոս, վորպես
խորհրդային ժողովրդի հավատարիմ զավակ: Հե-
ռավոր-արևելյան Կարմրադրոշ Հատուկ Բանակը
ձեզ հետ միասին վշտանում ե ծանր կորուստի
առթիվ և ձեզ, բոլոր համադյուղացիներին ու
հարազատներին իր խորին ցավակցությունն ե
հայտնում»:

Ծանր եր կորուստը: Միայն մի միիթարու-
թյուն կար. այն, վոր Սեմյոնն ընկավ մարտական
դիրքում, պաշտպանելով մայր-հայրենիքի սրբա-
դան հողը:

Խորը վշտի յերեկո յեր: Լագողայի ընտանիքը
սաստիկ վշտանում եր իր սիրելի Սեմյոնի համար:
Ֆեղոր Արբոսիմովիչը ձեռքերի վրա վերցրեց
փոքրիկ թոռնիկին, չարունակ ուշադրությամբ
դիտում եր նրան, նրա փոքրիկ դեմքի վրա Սեմ-
յոնին նմանող գծեր եր վորոնում: Ձեռքերի վրա
բռնած՝ նա իր թոռնիկուհու հետ միասին յերկար
քայլում եր անկյունից անկյուն...

Առավոտյան հայրը և վորդի իվանը նստած
եյին սեղանի շուրջը գլուխները խոնարհած՝ նը-
րանք դանդաղորեն, յերկար կշռադատելով յու-
րաքանչյուր խոսք, նամակ եյին գրում Հեռավոր-
արևելյան Կարմրադրոշ Հատուկ Բանակի շտարին:
Հաղթահարելով վշտի սուր կսկիծը, բորբոքվելով
թշնամու հանդեպ տածած վրեժինդրության կը-
րակով, հայրն ու վորդին խնդրում եյին թույլ
տալ իվանին իր զոհված յեղբոր տեղը բռնել:
Վերջում համառոտակի ասված եր. Իվանը կոմ-
յերիտական ե, ստախանովականորեն և վարում
տրակտորն ու կոմբայնը:

Տեղական տպարանում հերթապահություն
անելուց հետո տուն վերադարձավ մի յեղբայրը
ևս, 17 տարեկան Դմիտրին: Նա վճռականապես
պահանջում եր մի եյական ուղղում մտցնել հեռա-
գրում. Հեռավոր-արևելյան Կարմրադրոշ Հա-
տուկ Բանակ վորպես կամավորներ ուզում են գը-
նալ զոհված հերոսի յերկու յեղբայրները— Իվա-
նը և Դմիտրին:

Մոր սրուում արյունահոսում եր այն վերքը,
վոր հասցրել եր ավագ վորդի Սեմյոնի մահը:
Մայրը կարծես մի անգամից նիհարեց: Աչքերը
փոս ընկան: Այժմ նա կդիմանա՞ արդյոք իվանի
և անչափահաս Դմիտրիի հետ շուտով բաժանվե-


լու վշտին։ Մայրն իր մոտ կանչեց վորդիներին, իր կողքին նստեցրեց նստարանի վրա։ Նրա ձայնը մի փոքր դողով եր։

— Որհնում եմ ձեզ, զավակներս, դնացե՛ք սահման, Սեմյոնի վրեմն առե՛ք։ Պահպանեցե՛ք պաշտպանեցե՛ք խորհրդային հողը։ Մերն ե այդ հողը, հարազատ։ Իսկ վոր յես լաց եմ լինում, եղ վոչինչ։




Պատասխանը յեկավ նոր տարվա նախորյացին։ Պաշտպանության ժողկոմ ընկ. Վորոշիլովը հրամայել ե բավարարել Խվանի հանդիրքը։ Այլ եր գործի դրությունը պատանի Դմիտրիի նկատմամբ։ Խորհրդային Միության առաջին մարշալը գրում եր, վոր նա բարձր ե գնահատում Դմիտրիի հայրենասիրական զգացմունքները, չի կուսկածում, վոր պատանին արժանի յե իր հերոս յեղծորը, սակայն խնդրում ե մի փոքր սպասել։ Հենց թեկուզ մինչեւ այն ժամանակ, յերբ Դմիտրին 18 տարին կլրացնի։

Ծրջանում վայրկենապես լուր տարածվեց, թե Լազողան ընդունվել ե ՀԱԿՀԲ-ի շարքերում։ Վոլգայի ափերով մեկ միտինդների ալիք ծավալվեց։ Ժողովուրդը վողջունում եր հորը և մորը, վորոնք այդպիսի զավակներ են դաստիարակել։ Ժողովուրդն իր յերախտագիտությունն եր արտահայտում իվանին և Դմիտրիին՝ սպանված Սեմյոնին կարմիր-բանակային շարքում փոխարինելու իրենց անդրդվելի կամքի համար։ Տասնյակ և հարյուրավոր խորհրդային յերիտասարդ հայրենասերներ հայտարարեցին, վոր իրենք ցանկա-



Լազողայի ընտանիքը Խվանին նանապարհ ե դնում դեպի Կարմիր բանակը։



Սեմյոն Լազողայի հայրն ու յեղբայրները. հայր Յեղոր Սքրոսիմավիչը և յեղբայրներ՝ Խվանը, Դմիտրին և Սերգեյը։

նում են գրավել սամուրայների ձեռքով սպանված
հայրենակցի տեղը:

Բոլշևիկատեղի ռայոնի Տեղական դյուցի կողման
կողման կոստինը աշակերտական տետրա-
կի մի փոքր թերթի վրա հետեւյալն ե գրում Պը-
վոլգայի ռազմական շրջանի շտաբին.

«Խնդրում եմ ձեզ և դարձյալ մի քանի հազար
անգամ խնդրում եմ միջնորդություն հարուցել
ընկ. Վորոշիլովի առջև՝ ինձ ժամկետից առաջ
հեռավոր-արևելյան բանակի շարքերում ընդու-
նելու մասին: Յերբ հնչի ժամը, յես, Սեմյոն Լա-
զովայի նման, կկովեմ մինչև արյանո վերջին կա-
թիլը: Յես յերկու դիմում եմ տվել Պենզայի ռազ-
մական կոմիսարիատին: Հայրս անձամբ Պենզա յե-
մեկնել տեղեկանալու: Նա իր կողմից գրել ե.
Վոր կողմնակից ե իմ ցանկության, բայց մինչև
որս գրական պատասխան չի ստացված»:

Անտառային Մորդովիայի բնակիչ, փոստա-
յին աշխատող Լապչինը գրել ե.

«Մեծ վրդովմունքով լսեցի հերոսի, մեջ
վոլգաբնակ Սեմյոն Լազովայի սպանության լու-
րը: Յես իսկույն անհրաժեշտ գտացի գնալ հեռա-
վոր-արևելյան պանծալի սահմանապահների շար-
քերը:

Այստեղ իմ տեղն ե: Ծնվել եմ 1918 թվին
չքափոր գյուղացու ընտանիքում: Յերդվում եմ
ամբողջ խորհրդային ժողովրդին, վոր կրծքով
պաշտպանելու յեմ ծաղկող յերկրի սահմանների
անձնումիւնիությունը»:

Ռայոնական կինել-Զերկասսի գյուղում կա-
յացած միտինգին կարդացվեց հինգ պատանիների
հետեւյալ կարճ հայտարարությունը.

«Մենք ցանկանում ենք ուղևորվել դեպի այն
մարտական դիրքը, զոր հերոսական մահվան
պատճառով թողել են ընկերներ Սեմյոն Լազովան
և Սիխայիլ Դոլգոպոլովը: Վորը և ստորագրում
ենք՝ Բուգակով Միխայիլը՝ № 13 աղորիքի փա-
կանագործ, Գոլեկ Նիկոլայ-Տոլկայ կայարանի
բեռնիչ, Սմիւլյայել Յակովը՝ տրակակառիստ,
Չյորնիխ Միխայիլը՝ տրակակառիստ, Պանկրատով
Անդրեյ-Կոլտնահական: Բոլորս ել գրագետ ենք,
բոլորս ել առողջ...»:

Զերմ սիրո թելերը սերտորեն իրար եյին
կապում կոլտնահային գյուղը և սահմանամերձ
պոստերը: Յեղբայրը յեղբոր համար, ընկերն
ընկերոջ համար, գյուղը համագյուղացու հա-
մար—սա խորհրդային հայրենասներների պանծա-
յի և անխախտ տրագիցիան դարձավ:

Ռուսական հին, կանաչազարդ և խաղաղ Զա-
զորսկ քաղաքում ապրում ե Ֆիբուլների բանվո-
րական ընտանիքը: Պավել վորդին, վորպես
կրտսեր համանատար, աշխատում եր Խարարով-
սկում: 1938 թ. գարնանը ճապոնական հետա-
խուզության արոցիստական-բուխարինական
վարձկաններն իրենց ձեռքերը ներկեցին այլ սքան-
չելի մարդու արյունով:

Նրա հայրը՝ Պյոտր Ալեքսեյեվիչ Ֆիբուլը
և կրտսեր վորդին՝ Անասովին ԽՍՀՄ Գերագույն
Խորհրդի իրենց դեպուտատ—ՔԳԿԲ-ի գլխավոր
շտաբի պետ ընկ. Շալոշնիկովին գրել են հե-
տեւյալը:

«Մենք, մեր սքանչելի հայրենիքի հարազատ
դավակիներս, միջնորդում ենք Զեզ և խնդրում
ենք զեկուցել պաշտպանության ժողովրդական
կոմիսար ընկ. Վորոշիլովին մեր խնդիրքը, այն



սպանված Պ. Պ. Ֆիրսովի տեղ ԲԳԿԲ-ի չար-
քերում, հենց նույն զորամասում ընդունել նրա
յեղայր Անատոլիին, «ԶՈՄ Զ» գործարանի խա-
ռատ, ծնված 1919 թվականին։ Իմ զավակ Անա-
տովի Պետրովիչը ազնվաբար, խորհրդային բոլ-
շևիկյան ամենաբուռն խանդավառությամբ կծա-
ռայի աշխատավոր ժողովրդին»։

Ընկ. Վորոշիլովը, կարդալով նամակը, իս-
կույն կարգադրեց։

«Խորհրդային իսկական հայրենասեր Ֆիր-
սովների միջնորդությունը բավարարել։ Ընկ. Ա.
Պ. Ֆիրսովին ընդունել ԲԳԿԲ-ի կարմիր-բանա-
կային և ուղարկել այն զորամասը, վորոնեղ ծա-
ռայում եր հանգուցյալ Պ. Պ. Ֆիրսովը։ Ընկ.
Ֆիրսով Պյոտր Ալեքսեյեվիչին և նրա ամբողջ
ընտանիքին չնորհակալություն և կարմիր-բանա-
կային վողջույն հաղորդեցեք վողջ բանվորա-
կային գործադրության մեջ։ Կ.
Գյուղացիական կարմիր բանակի անունից։ Կ.
Վորոշիլով, 31 Վ, 38 թ.։»

Ողեսսային մարզի կարլ-Լիբկնեխտյան ուայոնի
«Պաշտպանություն» արտելի ուկրաինացի կոլ-
տընտեսական Շատուխիի վորդին, ԲԳԿԲ-ի հրա-
մանատար, զոհվեց մարտական գիրքում։ Ծե-
րունին խնդրում եր բանակ ընդունել իր յերկ-
որդի վորդուն —Վասիլիին։

«Ինձ համար չափազանց ծանր ե իմ սիրելի
վորդու կորուսուր։ Բայց այժմ յես միայն մի մը-
տադրություն ունեմ — կարմիր բանակին տալ
Միխայիլին փոխարինող մարտիկ։ Մենք վոչ մի
բանի առաջ կանգ չպետք ե առնենք, յեթե խըն-
դիրը վերաբերում ե մեր հայրենիքի ամրապնդ-
մանը, մեր սոցիալիստական հայրենիքի ամրա-
պնդմանը։»

Դոֆասսին՝ Ստալինի անվան ածխահանքում
ստախանովական նիկոլայ Դուրնեվը հանքահոր
բերեց իր կրտսեր յեղբայր Ալեքսեյին։ Նրան
հանձնեց ածխաջարդ մուրճը և ասաց։

— Դու, Լյոշա՛, աշխատիր այստեղ, ածուխ
հանիր, իսկ յես կմեկնեմ Հեռավոր Արևելք, ու-
ղեկալում կիոխարինեմ ճապոնացի հարձակիչնե-
րի գնդակներից մահախոցված մեր ավագ յեղ-
բորը։

Պրիմորյեյի անվեհեր բանակի չարքերում իր
վորդուն ընդունելու համար աշխատում եր և նը-
րա մայր Ադրիպիդինա Դմիտրիյեվնան։ Սովորա-
կան խորհրդային կին։

Ուփայում պլոտիկոսոր վիրաբուժին դիմեց
Վասիլի Բեմիկին անունով մի յերիտասարդ յեր-
կաթուղային բանվոր։ Նա աղաջում եր ոգնել իրեն
մեծ դժբախտության մեջ։

— Յես հատկապես յեկել եմ Դեմա կայարա-
նից։ Ինձ բանակ չեն վերցնում։ Ասում են՝ վա-
հանագեղձը մեծացել ե, ուսուցքը չափից ավելի
աճել ե։ Ի՞նչ անել։ Յես լսել եմ, վոր իրը թե
այդ ուսուցքը կարելի յե կտրել։ Խնդրում եմ,
պլոտիկոսոր... Դուք, հավանաբար, լսած կլինե՞ք
Լագոդա յեղբայրների մասին։

Վիրաբուժը պատասխանեց։

— Այս, ուսուցքը կարելի յե կտրել։ Ոպերա-
ցիան կյանքի համար վտանգավոր չե, բայց սաս-
տիկ ցալ ե պատճառելու։ Մտածեցէք, սիրելի՛ս։

Եերիտասարդը ծայր աստիճան անհամբերու-
թյուն եր ցույց տալիս։ Հաջորդ որր առավոտյան
նա պառկած եր ոպերացիայի սեղանի վրա։ Ոպե-
րացիան հաջողությամբ կատարվեց։ Մի քանի որ
հետո Վասիլի Բեմիկինը հիվանդանոցից ուղակի

սլացավ զեպի ռազմական կոմիսարիատ։ Խոր-
հըրդային յերիտասարդ հայրենասերն ընդունվեց
սահմանապահ զորամասերից մեկում։

IV

Իվան Լավողայի հետ միասին Հեռավոր Ար-
քակելք մեկնեց նաև հայրը։ Դրան լուրջ պատճառ
կար։ Ծերունին շատ եր հավատում իր վորդուն,
զիտեր, վոր նա կամքի տեր և խելացի մարդ ե։
Բայց և այնպես նա իրեն հանդիսա չեր զգում,
մինչեւ վոր իվանը Սեմյոնի գերեզմանի վրա
չերդվի, վոր արժանի կլինի իր յեղբորը և չե ա-
րատավորի ընտանիքի պատիվ։

Խարարովսկում Ֆեղոր Արրոսիմովիչը և ի-
վանը յեղան Հեռավոր-արևելյան Կարմրադրու,
Հատուկ Բանակի շտաբում։ Յերկար և սրտագին
խոսակցություն տեղի ունեցավ։


Հորը և վորդուն իրավամբ անվանում եյին
ուսւ դյուցազներ։ Վորդին իր հասակով և ա-
ռողջությամբ հորը չեր զիջում, իսկ հայրը
հաղթանակ եր։

Ֆեղոր Արրոսիմովիչը դրան պատասխանում
էր.

— Ինչպես կեչին ե, այնպես ել նրա ճյուղերն
են։



Լուսաբացին բուքը հանդարտվեց։ Հանգստա-
ցան տայգայի ծառերը։ Սառնամանիքը մեղմա-
ցավ։ Մոտակա սովկաների վրա յերեաց փետըր-
վարյան աղոտ արեգակը։ Ռուսական հողի առա-
ջին կիլոմետրերի վրա, հեռավոր-արևելյան մի-
փոքր քաղաքում ուղիղ քառանկյունի ձևով դա-



իվան Լավոդան յելույք և ունենում խակինսկի ույոնի աշխատա-
վորմերի միտինգին, վոր կազմակերպված եր նրան Կարմիր Բանակ
ուղարկելու առիվ։

սավորվեց զորագունդը։ Անշարժ են մարտիկների շարքերը։

Զորաշարքին մտտեցան յերկու յեկվորներ։ Նրանց անհամբեր սպասում եյին, վորպես հին և ջերմորեն սիրված մտերիմների։ Կարևոր չե, վոր մինչ այդ մարտիկները նրանց յերբեք չեյին տեսել։ Շատ բան եր նրանց մտերմացնում, շատ բան եր միմյանց կապում… Առաջինը չնում եր հաղթանգամ և թիկնեղ մարդը։ Նրա լայն և խոժոռ դեմքն ակոսում եյին խորը կնճիռներ, զլխարկի տակից ըստը եր ցցվել սպիտակացած մազափունջ, բայց բոլորովին յերիտասարդի նման եյին փայլում աչքերը։ Նա զգուշաբար եր կրում հրացանը։ Հրացանի ագուստը ծակել եյին գընդակները։ Մի փոքր հետեւից քայլում եր նրա նըման զորեղ, ըմբշամարտի կառուցվածքով մի յերիտասարդ՝ հագած կոկիկ դարաղած կիսամուշտակ։ Յե՛կ արտաքինով, և՛ հասակով, և՛ իրենց վստահ քայլվածքով յերկուսն ել իրար եյին նմանում։ Հայր և վորդի։

Հայրը մոտեցավ հրամանատարին և ասաց.

— Մարտիկների շարքերում բաց տեղեր չըպետք ե լինեն։ Գիշատիչ և չարանենդ ճապոնական սամուրայների զնդակները խլեցին իմ անդրանիկ վորդուն—Սեմյոն Լազողային։ Նրա տեղը պետք ե կանգնի իմ յերկրորդ վորդի իվանը։ Թույլ տվեք իվանին շարքի կանգնել։

Համաձայնություն ստանալով, հայրն ուշադրությամբ դիտեց շարքերը։ Նրա վորդին բոլորից բարձրահասակն եր, և նա նրան տարավ աջ թեր։ Ապա հրացանը վորդուն տալով՝ ասաց.

— Զավա'կս, վերցրու քո հերոս յեղբոր հրացանը։ Դրանով կրակիր գիպուկ, թշնամուն հար...

վածիր անվրեալ, ինչպես այդ անում եր Սեմյոնը։ Քո սրտում թող յեռա ջերմ, յերեք չսառչող սեր դեպի հայրենի հողը և սրբազան տտելություն դեպի յեղբորդ սպանողները։ Ամեն բանում նըմանվի՛ր յեղբորդ։ Այդ ամենալավ միիթարությունը, ամենամեծ ուրախությունը կիինի քո զանգամյալ մոր համար, քո հոր համար։ Իսկ յեթե կարիք լինի— ինքս ել կրամ և կնվիրեմ իմ արյունը կաթիլ առ կաթիլ… Հիշե՛ր, զավա'կս, կյանքում լինում ե այսպես—մարդ մեռնում ե, իսկ հաղթանակը նրան ե մնում։



Իվանը հոր և հայրենակիցների պատգամավորության հետ միասին մեկնեց դեպի սահման, այն զորամասը, վորտեղ ծառայում եր Սեմյոնը, այնտեղ, վորտեղ խորհրդային հողի ամենավերջին շերտի վրա թափվեց հերոսի արյունը։ Սահմանագլխի սյունից միքանի մետք հեռու բոլորը կանգ առան։ Ավելի հեռու գնալը վտանգավոր եր։ Գլխարկները հանեցին։ Ֆեղոր Արբոսիմովիչն անկատելի կերպով սրբել արշակատում եր աննկատելի կերպով սրբել արշականուր լոռությունը խանդարեց իվացնաքը։ Ընդհանուր լոռությունը խանդարեց իվացնը. նա ինդքեց ցույց տալ իրեն այն վայրը, վորտեղ վիրավորել են Սեմյոնին։

— Դա վտանգավոր վայր ե, — առարկեց նրանց ուղեկցող լեյտենանտար, վոր նույնպես համերկրացի յեր, վորդաբնակ։

— Միևնույն ե, գնա'նք։
— Դե ի՞նչ կարիք կա տեսնելու, զավակս… վորդեց հետ պահել իվանին հայրը։

— Խնդրում եմ, գնա'նք, յես պետք ե ճանաչեմ այդ վայրը, — իր ասածը պնդեց իվանը։

Աւղեկալի պետը վերջիվերջո անձնատուր յեղավ։ Իվանը և լեյտենանտը դեպի առաջ սողացին։ Անսպասելի կերպով լեյտենանտը ձեռքը կպցըեց Իվանի ուսին. ահա այստեղ ե։ Նա մատով ցույց տվեց խանձրած թուփը։ Իվանը ձեռքը յերկարացրեց, ինչ վոր չոշափեց այն թուփը, վոր իբրև քողարկում եր ծառայում Սեմյոնին, պոկեց մի քանի տերեւ և գրեց գրանիք։

Ուղեկալում Խվանին մոտեցրին կանոնավորապես հավաքված և սարքված մի մահճակալի.

— Այստեղ քնում եր Սեմյոնը, այժմ տեղավորվեցիք դուք:

Կողասեղանի վրա բաց դրությամբ զեռ
դրված կար մի գիրք, վոր Սեմյոնը չեր կարդա-
ցել-վերջացըել:

Հայրը և համերկրացիները մեկնեցին։ Ի-
վանն սկսեց պարապել զորագնդի դպրոցում,
պատրաստվում եր գառնալ կրտսեր հրամանա-
տար։ Շուտով նա առաջին շնորհակալությունն
ստացավ գերազանց ուժան համար։

Մի անտառապատ հովտում, վորը շրջապատ-
կած եր ձյունե զդակներ հագած առամնածե-
լեռների զդթայով, իվան կազուզան առաջին ան-
գամ տեսավ տանկեր: Իր կյանքում կարեոր զեր
խաղացող այդ հանդիպման մասին իվանը մեծ
գոհումակությամբ և հիշատակում:

— Ինձ շատ զուր յեկան այդ մեքենաները:
Յես սկսեցի տանկերից մեկը բոլոր կողմերից
դիտել, չոչափել, ներս մտա: Այստեղ հենց իմ
մեջ մի միտք հոգացավ—տանկիստ դաւնալ: Տռն-

կով կարելի յե մեծ գործեր կատարել, — Հարկա-
յառ ե մհան բարեկամանայ նրա հետ:

Անցան ամիսներ։ Խորունկ ձորերում սկսեցին
աղմկել գարնանային սրբնթաց հոսանքներ։ Սոպ-
կաներն սկսեցին կանաչել։ Տայղայում արժնացալ
գարնանային կյանքը։ Լաղողան շարունակ տան-
կերի մասին եր մտածում։

իվանի ցանկությունը, վերջապես, իրականացագիւն տանկի զորամաս:

Այստեղ իվանին շատ ողտակար յեղավ նրա
կոմբայնավարի արվեստը, վորը հիանալի կեր-
պով զուգորդվում եր խուզարկու մտքի և հաղ-
վագյուտ հաստատակամության հետ։ Հիսուն ո-
րից հետո իվանը տանկի մեխանիկ-վարորդի տե-
ղը բռնեց։ Աշակերտից նա աննկատելիորեն դար-
ձավ ուսուցիչ, ուսումնական ստորաբաժնում
սկսեց սովորեցնել առաջին դասարանի աշակերտ-
ներին։

Կես տարուց հետո յեկավ Դմիտրին (նա այ-
նուամենայնիվ ձեռք ըերեց ՀԱԿՀԲ-ում կամա-
վոր գնալու թույլավություն)։ Նրա հետ յեկան
յերկու Միջուրիններ. միենույն կողի մէջ Սե-
մյոնի հետ սպանվել և նաև նրանց յեղբայր Գրի-
գորին։

Իվանն առաջարկեց կազմակերպել Հաղողա-
Միչուրին յեղբայրների տանկային եկիպաժ և
մրցման հրավիրել Միխեյեվ ազգանունով չորս
յեղբայրների տանկերը։ Նրանք համերկրացի-
ներ են—վոլոֆարնակներ (Միխեյեվների յերկու-
կրտսեր յեղբայրները կամավոր եյին յեկել Ճե-
ռավոր Արևելք՝ վորպես պատասխան Սեմյոնի

մահվան)։ Իվանը կայծ հրահրեց, վորից չուտով բոց առաջացավ։ Այն ցայտուն արդյունքները, վոր մրցակցության մեջ ձեռք են բերում հայրենասեր յեղբայրների տանկային եկիպաժները, անփոփոխաբար վորակես դրոշ են ծառայում հեռավորաբելյան ամբողջ ռազմաճակատի համար։ Բոլոր տանկիստների յերազն ե՝ տանկերն այնպես վարել և «հակառակորդին» այնպես հարվածել, ինչպես Լագոդաները, ինչպես Միխեյեվները։

Իվանը պատմելու սիրահար չե, բայց չկարողացավ զսպել իրեն և խոստովանեց։

— Հիշում եմ, առաջին անգամն եր, վոր տանկը ձյան միջով տարանք։ Մենք բոլորս հուղվում եյինք։ Խնդիրը դժվար եր։ Ճանապարհին կային բազմաթիվ արգելքներ—ձորակներ, զառիվերներ, սառցապատ լեռնալանջեր։ Հրաժանատարը գովեց—նշանակում ե, գլուխ բերինք։ Հենց նույն որը Միտյան և յերկու Միջուրինները ցույց տվին գնդացիրը մարտական լիցքերով կըրակելու իրենց հմտությունը։ Ստացան գերազանց գնահատական։ Շուտով սովորեցին գրավել ամեն մի սովորական։ Տայգայում մեզ համար չկան անանցանելի ճանապարհներ։ Վորտեղից հարկավոր ե անցնել, այնտեղ ել ճանապարհ ե։ Գնդացիրների, թնդանոթի հետ նույնպես լավ բարեկամներ ենք։ Սեմյոնից վատ չենք կրակում։ Իսկ նա հազվադյուտ սնայպեր եր։ Վաղուց չե, վոր Դմիտրին սկսել ե սովորել նշան խփել։ Գերազանց գնահատական ստանալու համար աշտարակային հրաձիգը յերեք անգամ պետք ե նշանին խփի։ Մինչդեռ Դմիտրին իրար հետեւից ինը գընդակ ե խփել նշանին։

Ինքն Իվանը հրամանատարությունից 12 շրջադարձակալություն ե ստացել։ Հեռավորաբելյան զորամասերում գոյություն ունի մի տրագիցիամիավորության լավագույն մարտիկը լուսանը-կարվում ե դրոշակի մոտ։ Իվան լագողան արժանացավ այդ պատվին...

Այդ ամենը հորից ե մնացել։ Նրա դպրոցն ե, նրա սովորեցրածը։ Վորուների աչքերի առաջշարունակ կանգնած ե Ֆեղոր Աբրումովիչի հերոսական կյանքը։ Նրանցից ամեն մեկը մանկությունից աշխատում եր հորը նմանվել։

Ինչպես կեչին ե, այնպես ել նրա ճյուղերն են։

V

Յերկաթուղային դեպոների և վերանորոգման արհեստանոցների բանվորական ժողովներում, կոլտնտեսությունների գաշտակայաններում, ՄՏ կայանների և խորհտնտեսությունների ազարակներում ավելի քան ֆառասուն հազար աշխատավորներ առաջադրեցին Ֆեղոր Աբրումովիչ Լագողայի թեկնածությունը՝ ՈԽՁՄՀ-ի Գերագույն Խորհրդի դեպուտատական ընտրելու համար։ Հունիսի 26-ի անմոռանալի որը ընտրողների ամբողջ հարյուր տոկոսն իր ձայնը տվեց Ֆեղոր Լագողային։

Մե՛ծ ե ժողովրդի իմաստությունը։

Ֆեղոր Լագողայի ամբողջ կյանքն ասում ե, վոր այդ ընտրությունը ճիշտ ե կատարվել։

1915 թվականի դեկտեմբերին վոլգաբնակ բատրակ Ֆեղոր Լագողային զինվոր վերցրին։ Յարական բանակի վո՛չ հաղթություններն եյին

հիացնում նրան և վո՞չ ել պարտությունները տիրեցնում։ Նրա հոգու խորքում մի հույս եր թագնված։ ցարը տանուլ կտա պատերազմը, այն ժամանակ նրան ամենայն հավանականությամբ դուրս կը քեն, և աշխատավոր մարդիկ ճնշումից կազատվեն, ամբողջ կրծքով ազատ շունչ կքաշեն։

Զորանոցի մուտքի մոտ ֆեղոր Աբրոսիմովին ուրիշ մուժիկների հետ միասին դեն չպրտեց պատառոտած շորերը, բայց նա ամեն ինչ պահել ե իր հիշողության մեջ։ Լագողան հիշում եր, ին ի՞նչպես Ռւէրախնայում, ինչ-վոր մի տեղ կիեկ մոտ, նեղություններ ու տառապանքներ եր քաշում իր հայրը և թե ի՞նչպես 19-րդ դարի վերջում սովոր նրանց գեպի վորզա քեց։ Անդըր-վոլոյան տափաստաններում տաս տարեկան ֆեղորը հոր հետ միասին կալվածատիրական յերամակներ և հոտեր եր արածացնում։ Տղան հասունացած մարդ դարձավ, բայց կյանքը չլավացավ։ Հարկերը և տուղանքները քանի գնում տարեց տարի ավելի եյին գերակշռում վաստակած գումարները, և պարտքերի դիմաց արդեն վաղուց եր վերգրված գեղջկական խղճուկ կահ-կարասիքը։ Իսկ յեթե պատահեր, վոր մահացու թշնամի հանդիսացող խորշակը խանձում եր անդրվոլոյան տափաստանները, և վոչնչացնում հացահատիկը, ապա Լագողայի ազնիվ և աշխատասեր ընտանիքին մի բան եր մնում անելու—մուրացկանություն անել, վողորմություն խնդրել։

Լագողան մեկն ե յեղել այն առաջիններից, վորոնք անմիջապես արձագանքեցին բոլցեիկների կոչին՝ զենքը դարձնել ստրկացնողների դեմ, կովի գնալ հանուն ազատության։ Շուտով նա

վաստակեց քաջ և կորովամիտ մաշտիկի վառք, մի մարտիկ, վորն ունի պայծառ խելք, ամուր ձեռք և բուռն ատելություն թշնամու հանդեպ։ Այն զորամասերը, վորտեղ գտնվում եր Լագողան, նրան հանձնարարեցին պաշտպանել կարմիր Բանակին արկեր մատակարարող ուազմական մեծ գործարանը։ Գործարանից վոչ-հեռու կատաղի կոփմեր եյին տեղի ունենում։ Այն որը, յերբ Դուտովի կազակային բանդաները, ճեղքելով ուազմաճակատը, դեպի գործարանն եյին սլանում, շտաբում բույն դրած դավաճանները հրամայեցին ամբողջ պահակախումբը վիերացնել գործարանից և կարմիր բանակայիններին հանգործարանից կը տեղ թիկունքում։ Մազմիկ Լագողան ներքուստ զգաց, վոր այստեղ ինչ-վոր ստոր բան ե կատարվում։ Նա սկսեց համոզել ընկերներին մնալ և մինչև վերջին շունչը պաշտպանել գործարանը։ Լագողային ոգնության շտապեց բոլցեիկների տեղական կազմակերպությունը, և գործարանի պաշտպանության համար ստեղծվեց կամափորների մի ջոկատ։ Թշնամու պլանը ջախջախվեց։

1919 թ. գարուն ե։ Մազմաճակատից Անտոնովսկի փոքրիկ գյուղն յեկալ մաշտիկ Ֆեղոր Լագողան՝ կարճ ժամանակով այնտեղ մնալու համար։ Գիշերով հանկարծ գյուղակի վրա տվին կոլչակյանները։ Կուլտակ Ավրամենկոյի մատնությամբ սպիտակ-գլավարդիականները Լագողային ձերբակալեցին։ Ծեծելով, նրանք գերիին քշեցին տարան շտաբ։ Այնտեղ առանց ձգձելու, նույնիսկ առանց դատավարական ձևականությունների վճիռ կայացրին—գնդակահարել Լագողային։

Բայց վոչ, զորեղ կարմիր-բանակայինի հա-

մար դեռ չուտ և կյանքից բաժանվելը։ Լագողան փախչում ե։ Սպիտակների թիկունքում նա կապ և հաստատում կոլչակի բանակից փախած դասալիքների հետ, հավաքում ե 30 մարդուց բազկացած մի մարտական խումբ և նրանց հետ միասին անցնում ե դեպի Վոլգայի ստորին հոսանքը և ավելի հեռուն, դեպի Ուրալսկ։ Այստեղ, ջարդու փշուր անելով կապակային սպիտակ զորամասերը, կռվում են կարմիր Բանակի դնդերը։ Ֆեդոր Աբրոսիմովիչը գտնվում ե պատվավոր և վտանգավոր դիրքում—հետախուզության մեջ։ Նա թափանցում ե հեռու՝ դեպի սպիտակ զորքների խորքը, դիտում է ամենաթագուն տեղերը և կարմիր հեծելազորի հրամանատարությանը զինում ե ամենաարժեքավոր տեղեկություններով։ Նույնքան քաջարի ուրիշ յերկու րնկերների հետ միասին Լագողան հարձակում ե գործում ատաման Սարաֆանկինի շտաբ-զորակայանի վրա, բռնադրավում ե կարեւոր փաստաթղթերը, զենք և զգեստ։ Ինքը ատամանը, փրկելով իր կաշին, շալվարը դեռ չհագած, պատուհանից դուրս ցատկեց և փախավ, թագնվելով յեղեգների մեջ։

Ուսւ ժողովրդի զավակ Ֆեղոր Աբրոսիմովիչ Լագողան հարազատ խորհրդային իշխանության համար կռվել ե թե՛ Վոլգայի գյուղերում, թե՛ Կազախստանի առւլներում, թե՛ Բուխարայի ղըշլաղներում։ Նա կարմիր Բանակի շարքերում մարտընչել և Դուտովի կազակային բանդաների, կոլչակի հրոսակախմբերի, բասմաչների հորդաների դեմ։

Իսկ 1928 թվականին Լագողան վերջին կռվը հայտարարեց իր գյուղի կռւլակներին, հենց նրանց, ովքեր նրան կոլչակյաններին հանձնեցին

1919 թվականին։ Այդ ժամանակ Լագողան Պովոլժյեյում առաջիններից մեկն եր, վոր կազմակերպեց կոլտնտեսություն, վորպես որինակ ամբողջ շրջանի գյուղացիների համար։

Վորդիները մեծացան։ Մեմյոնը դարձավ Խսակլինսկայա ՄՏ կայանի տրակտորային բրիգադիր, Խվանը կոմբայնավար դարձավ և կոմբայնը տարավ դեպի հեղեղատները, վորոնցով ծածկրված եյին ցորենի ցանքերը։ Վորդիների հետ միասին ՄՏ կայանի աղարակն յեկավ նաև հայրը։ Դրանք անմոռանալի որեր եյին, յերբ Դոնի հանքափոր Ստախանովը սկիզբ դրեց նոր համաժողովրդական շարժման։ Փականադործ Ֆեդոր Աբրոսիմովիչ Լագողան չհապաղեց և իր ձայնը տալու։ Նրա վոսկե ձեռքերը համարձակորեն խորտակում եյին այն ամենը, ինչ հնացած եր սրբում-ավլում եյին բոլոր արգելքները։ Քանի՛ քանի անգամ վնասարարները և քաղաքական տիմարները հարձակվել են նորարար փականադործի վրա։ Լագողայի գլխով շատ բան և անցել բայց նա այնպիսի մարդ չե, վոր նահանջի անհաջողությունների, առավել ևս, սպառնալիքների առջևից։ Հիսունամյա Ֆեդոր Աբրոսիմովիչն իր ուժերը քաղում ե իր անձնվեր հայրենասիրությամբ, խորը հավատքով դեպի Լենինի-Ստալինի գործը։ Այս հատկությունների համար, ինչպես նաև հազվագյուտ համեստության և աշխատասիրության համար Պովոլժյեն խիստ հարգում և սիրում ե իր Լագողային, հավատում ե, վոր ժողովրդի դեպուտատը նույնքան կայուն և ուժեղ կլինի այն պատվավոր գործում, վորպիսին նրան հանձնարարել են։

Հունիսյան լավ որերից մեկն ե: Պովոլժիայի Պոխվիստնելով կայարանի մոտ գտնված հրապարակը ծայրե-ծայր լիքն ե մարդկանցով: Բոպեառ ըստ ըստում են ՌիֆՍՀ-ի Գերազույն Խորհրդի գեղուտատության թեկնածու Ֆեղոր Աբրոսիմովիչ Լազողայի Ժամանելուն: Կոլտնտեսությունից կոլտնտեսություն, մի մեքենատրակտորային կայանից մյուսն ե շրջագայում փականագործ Լազողան: Նա ծանոթանում է իր ընտրողների հետ, հետաքրքրվում ե նրանց աշխատանքով, խորհուրդներ ե տալիս, սովորեցնում, ոգնում: Պոխվիստնելոյի միտինդին նա մի վոքը ուշացավ—կանգ առավ ՄՏ կայանի վերանորոգող արհեստանոցներում, վորտեղ ցույց եր տալիս, թե ինչպես պետք ե տաշել դետալները:

Հենց նույն որը Պոխվիստնելով կայարանի պերոնի մոտ մի քանի վայրկյանով ուշացավ հեռավոր-արևելյան գնացքը: Պատփորմի վրա իշան յերկու զինվորական-դյուցազնական դեմքեր, գեղեցիկ կերպով հազնված պիլոտնր, նախանձելի կեցվածք: Առանց վորևե բան կասկածելու՝ նրանք դուրս յեկան հրապարակ: Նրանց ճանաչեցին: Լովեցի աղաղակներ.

— Այստեղ են Լազողայի վորդիները: Խընդրում ենք հանդես գալ: Թող պատմեն, թե հայրն ինչպե՞ս ե դաստիարակել նրանց:

Հարյուրավոր ձայներ վերառեցին այդ խընդիր-պահանջը: Իվանը բարձրացավ ամբիոն:

— Այստեղ մի ընկեր հարցնում եր, թե մեզ ինչպե՞ս ե դաստիարակել մեր հայրը, ինչպե՞ս ենք դարձել խորհրդային հայրենասերներ: Հայրս

վերադարձավ քաղաքացիական պատերազմից, այն ժամանակ մենք, նրա վորդիները, զեռ փոքր յերեխաններ եյինք: Յերեկոնները սեղանի չուրջը, հայրս մեզ պատմում եր թշնամու վրա կտտարած իր արշավանքների մասին, պատմում եր, թե ինչպես իր ընկերների հետ միասին նա կովում եր աշխատավորների յերջանկության և աղատության համար: Դեռ մանկությունից մենք վրոշեցինք պաշտպանել մեր հանրապետության սահմանները: Հիշում եմ, Սեմյոնն ասում եր հորս. «Ճա՛յր, դու բանակից վերադարձար վորպես կարմիր-բանակային, իսկ յես, կտեսնես, կվերադառնամ վորպես լեյտենանտ»: «Շատ բարի», — պատասխանեց հայրս...

Կայարանի արգելագծի մոտ Ֆեղոր Աբրոսիմովիչը կանգնեցրեց ավտոմոբիլը և շտապեց ուղղակի գեղի հրապարակ: Իվանի վերջին խոսքերը հասան նրա ականջին: Վորսիսի՛ ծանոթայն... Վո՛չ, չե՛ կարող պատահել... նա վո՞րտեղից պետք ե՛ գա... Բայց և այնպես Լագողան արագացրեց քայլերը: Ճառը քանի գնում այնքան ավելի պարզ եր լոգում: Ահա կարելի յե՛ զեմքնել դիտել: Այո, դա նա յե, նրա վորդի հետ հայրը բաժնութելիս ե յեղել մեկուկես տարի առաջ: Ամբիոնի աստիճանների վրա Ֆեղոր Աբրոսիմովիչը համբուրեց Դմիտրիին: Իվանը վերջացրեց իր յելույթը, շուր յեկավ և նույնպես հետ գրկախառնվեց...

Միտինդից հետո ամեն ինչ պարզվեց: Յերկու շաբաթ առաջ վորդիները հորր գրել եյին, վոր գնում են լեյտենանտների դպրոց, ճանապարհին տուն կհանդիպեն: Սակայն այդ նամակը հսակվի հասնելու ժամանակ Ֆեղոր Աբրոսիմո-

Վիշն այնտեղ չեր—նա շրջադայում եր իր ընտրական ոկրուգում։ Ահա հանգամանքների այսպիսի զուգակցումն ել առաջացրեց այդքան անսպասելի հանդիպում։

VII

Մեծ ե խորհրդային ժողովրդի հայրենասիրությունը։ Ինչպես Սևմյոն Լազորայի հերոսական մահվանն արձադանքեցին հարյուրավոր յերիտասարդ հայրենասերներ, այնպես ել իրենց չափին անցկացրած սամուրայների յուրաքանչյուր վոտնձությանը մեր ժողովուրդը պատասխանում ե քաջության և հերոսության նոր վերելքով։

Յեղբոր հետեից գնում են յեղբայրը և քույրը, վորդու հետեից—մայրը և հայրը։ Բազմամիլիոն ամբողջ խորհրդային ժողովուրդը պատրաստ ե կանգնելու հարազատ կարմիր բանակի շարքերում, վորպեսզի կրծքով պաշտպանի իր սուրբ սահմանները, իր նվաճումները։

Այսպես ե յեղել նաև Խասան լճի մոտ տեղի ունեցած կոխվների անմոռանալի որերին։

Զինվորական հիմանդանոցը Պոսյետումն ե։ Հենց նոր եյին յեկել վիրավորները, Զառողերնայաբարձունքի հերոսական գրոհման մասնակիցները։ Յերկու սանիտարներ հիմանդասենյակ տարան վիրավորված լեյտենանտ Միխայիլ Պոտապովին։ Հրամանատարի վրա կռացավ մի աղջիկ, վորի խալաթի թեկի վրա կարմիր խաչ կար։

Ծանոթ, հարազա՞տ զեմք։ Աղջիկը ակամայից հետ նայեց։

— Միշա, յեղբա՛յր, ի՞նչ ե պատահել քեզ։

— Ալեվտինա, քույրի՛կո, դու ի՞նչպես ես ընկել այստեղ։

— Իսկ մենք կոմյերիտմիության ամբողջ շրջկոմով ուազմանակատ ենք յեկել։ Վոմանք հիմանդանոցներումն են աշխատում, վոմանք ել սկավառակներ են պատրաստում, գնդացիրներ ժապավեններ են լցնում։

Ալեվտինան սկսեց կապել յեղբոր վերքը։

— Դու 39 աստիճան ջերմություն ունես։ Ի՞նչ հայտնենք մայրիկին։

— Գրիր, վոր թեթև վերք ե։ Իբր թե պատրաստվում եմ գնալ նրա մոտ՝ կարկանդակի համը փորձելու…

Մի քանի որ հետո լեյտենանտ Պոտապովին պետք եր փոխադրել Վլադիվոստոկ՝ վիրաբուժական ծանր ոպերացիա կատարելու համար։ Շոգենավը ինչ-վոր ծովախորշում կանգ առնելու պատճառով մի փոքր ուշացավ։ Վիրավորներով բեռնավորված պատզարակները կանգնած եյին ծովափին։ Ծովեզերքի մոտ այնքան ել շոգ չեր, ավելի թեթևորեն կարելի յեր ոդ չնչել։

— Բարեկ, Միշա ջա՛ն։ Պոտապովը լսեց մի քնքույշ և հարազատ ձայն։ Գլխավերեկի մոտ կանգնած եր մայրը, ՅՅ տարեկան մի պառավ կին։

— Մայրիկ, դո՞ւ ել այստեղ ես…

— Բա վո՞նց, Միշա՛ ջան, յես մարտիկների համար կերակուր եմ յեփում…

Կովի առաջին գծի վրա սանիտարները գտան մի ծանր վիրավորի։ Շուտով նրան բերին գումարտակի բուժակայան։ Այստեղ, ըստ յերեսութին, լավ են ծանաչում վիրավորին։ Բժիշկը կեղծ խստությամբ ասաց։

— Հը՞, վերադարձա՞ր, միախառնական:

Ահա թե ինչ կատարվեց: Հենց այդ բուժակայանի ատամնաբույժ Բեղողութելը շարունակ ձանձրանում եր. դե այսպիսի ժամանակ ել ո՞վ իր ատամները բժշկել կտա, ավելի լավ ե ինքս կովի գնամ և սամուբայների ատամները չարդուփշուր անեմ: Բաց թողնենք ավելորդ մանրամասնությունները: Կասենք միայն այն, վոր ատամնաբույժ Բեղողութելին առաջիններից մեկն եր, վոր ներխուժեց ճապոնական խրամատները: Նա վարպետորեն նոնակիներ եր նետում ճապոնացիների մէջ, հրացանի շեշտակի կրակով ջարդում եր թշամուն և դեռ ժամանակ եր գտնում կովող ընկերների վերքերը կապելու: Ճապոնական մի նոնակ քիչ եր մնացել կտրեր այդ սքանչելի խորհրդային ինտելիգենտի, ջերմ հայրենասերի կյանքի թելը: Բարեբախտաբար, գիրաբույժները հաղթեցին մահվան:

Թե հետազում ի՞նչ կատարվեց, այդ դու գիտես, ընթերցող: Յերախտագետ հայրենիքն իր պանծալի զավակին ամենաբարձր պարզե տվեց: Բորիս Պետրովիչ Բեղողութելին արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման:

Յանչիխեյի հովտում, սահմանամերձ բլուրների մոտ տարածվում ե «Հոկտեմբերի 20-րդ տարին» կոլտնտեսությունը: Հենց նրա կողքին Խասան լին ե: Կովի աղմուկը պարզորոշակի լսվում եր Զառողերնայա բարձունքից: Մոտորների գոռոցը դժուացնում եր ականջները: Յեվ նորից տանկերը հարձակման անցան՝ մահացու սարսափ տարածելով սամուբայների վրա, նրանց խուճապային փախուստի մատնելով: Ողում վայրկենա-

պես ոլանում են «բազեյիկներ»— կործանիչ և ոմբակոծիչ արագընթաց սավառնակներ:

Կոլտնտեսության վարչության շենքի մոտ բազմություն եր հավաքվել, յեռ ու զեռ եր: Կանգնած են յերկու բեռնակիր ավտոմեքենա, յեզերքին փակցված եր լայն և վեհ մակագրություն—«Հոկտեմբերի 20-րդ ամյակի անվան կոլտնտեսություն»: Բեռնակիրները ծայրեծալը լիքն եյին պոմիդորով, թարմ կարտոֆիլով, կաղամբի գլուխներով, կաթով լիքը բիտոններով: Կոլտնտեսականների ընդհանուր ժողովը վորոշել եր գիրքերում կավող մարտիկներին ամեն որ մատակարարել կոլտնտեսության առատ պաշարից թարմ բանջարեղեն, կաթ, մեղր: Այս խնդրում մեծ վեճ ծագեց կոլտնտեսության ներկայացուցիչների զորամասի հրամանատարության միջև: Կոլտնտեսականները կտրականապես հրաժարվում եյին մատակարարված մթերքների համար փող ստանալ:

— Ինչպես կարելի յե, դուք մեզ վիրավորում եք, չե՞ վոր դա մեր նվերն ե:

Իդեպ, Խասան լծի կոխված կողքից իվեր այդ արդեն յերկրորդ վեճն եր Յանչիխե հովտի կոլտնտեսականների և նրանց վաղեմի բարեկամների— Կարմիր Բանակի հրամանատարների միջև: Իրենց ժողովին կոլտնտեսականները միաձայն ասում եյին.

— Մենք հին պարտք ունենք ճապոնացիներին 1922 թվականից, ինտերվենցիայի ժամանակից: Այժմ այդ պարտքը վճարելու ամենահարմար առիթն ե: Գնա՞նք ուղմանակատ:

Հրամանատարությունը ստիպված յեղակ

յերկար համոզել իր բարեկամ կոլանտեսականներին, վոր նրանք իրենց տեղերում մնան:

— Դուք կոմբայններով բերքահավաք կատարեցեք, նոր տներ և ախոռներ կառուցեցեք, ինչպես պատրաստվում եյթ անելու: Մեր հողի դեմ վոտնձգություն տրած ճապոնացիների համար տունց ձեզ ել մահվան ժամը հասել ե...

Այդ որերին մրցակցություն սկսվեց Ն զորամասի տանկիսաների և կոլանտեսային կոմբայնների միջև...

VIII

Մոսկվայի մոտ գտնվող գյուղերում յերեկոները պատմում են ժողովրդական մի հրաշալի հեքիաթ, վորը կոչվում է «Յերեք վորդի»:

Կարմիր բանակից դեպի տուն, ծերունի հոր մոտ վերադարձան նրա յերկու վորդիները, մեկը նավասարի, իսկ մյուսն՝ ողաչու: Նրա յերրորդ վորդին՝ Յեղորը ճապոնական գնդակից սպանվեց հեռավոր-արեելյան սահմանի վրա: Յեղբայրներն ուղևորվեցին ուղեկալ, Ուսուրիայի տայգայում գտան կենսատու ջուր և հարություն տվին Յեղորին: Յերեք յեղբայրն ել մնացին սահմանում և այնտեղ ծառայեցին: Յերեք ճապոնացիները պոստում տեսան վերակենդանացած մարտիկին, կանչեցին.

— Հե՞յ, Յեղոր, այդ գո՞ւ յես:

— Յես ինքս եմ:

— Զե՞ վոր մենք քեզ սպանեցինք... — զարմացան թշնամիները. իսկ Յեղորը պատասխանում է.

— Դուք ինչքան ել վոր մեզ սպանեք, մենք դարձյալ կվերակենդանանք:

Յեվ հերավի, մի՞թե իվան և Դմիտրի Լազողաների մեջ չի վերակենդանում նրանց Սեմյոն յեղբոր լուսավոր կերպարանքը:

Մի՞թե խորհրդային հայրենասիրության բազմաթիվ արտահայտումների մեջ չի ապրում անմահ կերպարանքը ժողովրդական այն զոհված հերոսների, վորոնք իրենց կյանքը նվիրել են հայրենիքի համար, Լենինի-Ստալինի կուսակցության մեծ գործի համար:



Պատ. խմբագիր՝ Հ. Պարոնյան
Լեղվական խմբագիր՝ Պ. Արելյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագիր՝ Հ. Մանուկյան
Թարգմանիչ՝ Վ. Ավագյան

Գլավլիսի լիազոր՝ Վ.—1134. Հրատ. №4974

Պատվեր 613. Տիրաժ 5000.

Թուղթ 64×92. Տպագր. 2,5 մամ.

Մեկ մամ. 20196 նշան.

Հանձնված և արտադրության 4 մայիսի 1939 թ.

Ստորագրված և տպագրության համար

Պետհրատի 1 տպարան, Յելիսան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0318674

11302

ԳԻՒԸ 60 Կ.

Д. ИЛЬИН
Пограничник Лагода
Гиз. Арм. ССР, Ереван, 1939 г.